ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 25 -Ա

« 09 » ՓԵՏՐՎԱՐԻ 2023Թ

«ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ, ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԳՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ (ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ) ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության 30-րդ և 40-րդ կետերով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի 16.01.2023թ. թիվ 04-2023 և 03.02.2023թ. թիվ 012-2023 գրությունները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 20-ի «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենին առընթեր գիտական խորհրդի, թանգարանային առարկայի ցուցանմուշի գնման հանձնաժողովի կազմերը և թանգարանի կողմից տրվող վճարովի ծառայություններ սակագները հաստատելու մասին» թիվ 70 որոշումը:
2. Հաստատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենին առընթեր գիտական խորհրդի անհատական կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենին առընթեր թանգարանային հավաքածուի գնման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
4. Հաստատել «ՀՀ Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի մշակութային արժեքների (ցուցանմուշների) հրապարակման և օգտագործման նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվող վճարովի ծառայությունների սակագները՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2/10/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ. փետրվարի 9-ի թիվ 23-Ա
որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

1. **Կարեն Ազատյան** - «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն (խորհրդի նախագահ),
2. **Արգամ Դովլաթյան** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն,
3. **Արգիշտի Միքայելյան** – «Հայփոստ» ՓԲԸ-ի հարավային ցանցի ղեկավար,
4. **Արմինե Հարությունյան** – «Պատմաշակութային արգելոց – թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Գլաձորի համալսարան պատմամշակութային արգելոց-թանգարան» մասնաճյուղի վարիչ,
5. **Աստղիկ Դանիելյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի ավագ գիտաշխատող,
6. **Արտավազդ Խաչատրյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի նկարիչ-ձևավորող,
7. **Ալինա Մկրտչյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի կրտսեր գիտաշխատող,
8. **Կարինե Ստեփանյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի ֆոնդապահ,
9. **Աստղիկ Գևորգյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի հաշվապահ:

Հավելված 2 ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ. փետրվարի 9-ի թիվ 23-Ա
որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԳՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

1. **Կարեն Ազատյան** - «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն (հանձնաժողովի նախագահ),
2. **Աստղիկ Դանիելյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի ավագ գիտաշխատող,
3. **Ալինա Մկրտչյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի կրտսեր գիտաշխատող,
4. **Կարինե Ստեփանյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի ֆոնդապահ,
5. **Աստղիկ Գևորգյան** – «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի հաշվապահ:

Հավելված 3՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ. փետրվարի 9-ի թիվ 25-Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ (ՑՈՒՑԱՆՄՈՒՇՆԵՐԻ) ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

1. Մշտական ցուցադրության մուտքավճար

- դպրոցականներ – 500 դր.
- չափահասներ – 700 դր.
- օտարերկրացիներ -1000 դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ, նախադպրոցականներ – անվճար

2. Էքսկուրսիայի արժեքներ

- ՀՀ քաղաքացիներ -1000 դր.
- օտարերկրացիներ – 1500 դր.

3. Ֆոնդային ցուցանմուշի վերաբերյալ

- նյութի տրամադրում, կոնսուլտացիա (1 ցուցանմուշ) – չափահասներ - 300դր. վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ – 200դր.
- մշակում և սպասարկում (1 թեմա) – չափահասներ - 1000դր., վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ - 500դր.

4. Տարբեր հաստատությունների կողմից կազմակերպված ցուցահանդեսին, միջոցառմանը ցուցանմուշի փոխտվություն

- ցուցահանդես (1 ցուցանմուշ) -250դր.
- միջոցառում (1 օրվա համար) -2500դր.

5. Ցուցանմուշի փոխտվություն գեղարվեստական նկարման համար (գրաֆիկա-գծանկար, գեղանկար և այլն)

1 օրվա համար, 1 ցուցանմուշ

- չափահասներ - 2000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ – 1000դր.

6. Ֆոնդային ցուցանմուշի՝ փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում

- չափահասներ -100դր.,
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ - անվճար

7. Ցուցանմուշի թվային ֆայլի տրամադրում

- չափահասներ - 100դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ՝ 1 թվային ֆայլի համար – անվճար

8. Թանգարանի տարածքում, ցուցադրությունում գտնվող նմուշի լուսանկարման իրավունքի համար

սիրողական լուսանկարչական ապարատով

- դպրոցականներ – 300դր.
- չափահասներ – 300դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ – 300դր.

9. Թանգարանի ֆոնդում պահվող և հրապարակված առարկայի չափագրության, լուսանկարման իրավունքի համար

Սիրողական լուսանկարչական ապարատով

- չափահասներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) - 2000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) – 1000դր.

Պրոֆեսիոնալ լուսանկարչական ապարատով

- չափահասներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) - 3000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) – 2000դր.

10. Թանգարանի ֆոնդում պահվող և չհրապարակված նյութի լուսանկարման իրավունքի համար*

Սիրողական լուսանկարչական ապարատով

- չափահասներ (1 ցուցանմուշ՝ չափագրություն և լուսանկարում) - 3000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) – 1500դր.

Պրոֆեսիոնալ լուսանկարչական ապարատով

- չափահասներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) - 5000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ (1 ցուցանմուշ չափագրություն և լուսանկարում) – 2000դր.

11. Թանգարանի ներսում վավերագրական կինոնկարի համար՝ կինո կամ հեռուստատեսային նկարահանում (առանց ֆոնդից կամ ցուցասրահից լրացուցիչ ցուցանմուշի տրամադրումով)

Սիրողական տեսախցիկով

- չափահասներ (նկարահանման 1 օր) - 5000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ (նկարահանման 1օր) – 3000դր.

Պրոֆեսիոնալ տեսախցիկով

- չափահասներ (նկարահանման 1 օր) - 10000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զինծառայողներ (նկարահանման 1օր) – 5000դր.

12. Գիտահանրամատչելի, գեղարվեստական ֆիլմի նկարահանման համար

- չափահասներ (նկարահանման 1 օր) - 15000դր.
- վետերաններ, հաշմանդամներ, թոշակառուներ, զին. ծառայողներ (նկարահանման 1օր) – 10000դր.

13. Կինոստուդիային կամ հեռուստատեսությանը ցուցանմուշի ժամանակավոր փոխտվություն**

- չափահասներ (1 ցուցանմուշ, նկարահանման 1 օր) - 30000դր.

14. Սրահի վարձակալության համար

չափահասներ

- 1 օրվա համար – 15000դր.
- երկու և ավելի օրվա համար – 10000դր.

- Անվանական ֆոնդի սպասարկումը՝ անվճար

* Նման դեպքերում նյութը տրամադրվում է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: